ԹՈՒՐՔԻԱՆ ԵՌՅԱԿ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՆՏԻ ՄԻՋԵՎ 1914 ԹՎԱԿԱՆԻՆ. ՊԱՏՐԱՆՔՆԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՈՍՖՈՐԻ ԱՓԵՐԻՆ

Պրոֆ. ԷՐՆՍՏ ՎԵՐՆԵՐ

(ԳԳՀ, Լայպցիգ)

Ֆելդմարշալ-լեյտենանտ Ց. Պոմյանկովսկին, որ երկար տարիներ Ավստրո-Հունգարիայի զինվորական կցորդն էր Թուրքիայում, հետադարձ մի հայացք նետելով, գրում է. «Այնտեղ (Կոստանդնուպոլսում — Է. Վ.) խաչաձևվում էին գրեթե բոլոր եվրոպական մեծ տերությունների շահերը, և թվում էր, թե իր հարակից նեղուցների հետ այս քաղաքի հնարավոր գրավումը վճռական կդառնա ապագա քաղաքական իրավիճակի ձևավորման և, նույնիսկ, համաշխարհային հեգեմոնիայի հարցի համար»[1]։ Եվ իրոք, նեղուցների խնդիրը իմպերիալիստական երկրների շրջանում համաշխարհային տիրապետության համար կարևոր դեր էր խաղում։

Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովը 1914 թ. հունվարին հայտարարեց. «Գերմանական ռայխսկանցլերը պետք է իմանա, որ եթե երկրագնդի վրա լիներ մի որևէ կետ, որի վրա կենտրոնացվեր մեր ջանադիր ուշադրությունը... դա կլիներ Կոստանդնուպոլիսը, որը մեզ համար հավասարապես բացում և փակում է Միջերկրականի մուտքը»[2]։ 1914 թ. հունվարի 13-ին, ինչպես հայտարարեց հատուկ կոնֆերանսում, նա անգամ պատրաստ էր դիմել պատերազմի, եթե Լիման ֆոն Սանդերսը չհրաժարվի կորպուսի շտաբից Կոստանդնուպոլսում[3], իսկ Բոսֆորի ռուսական զինվորական կցորդ գեներալ Լեոնտևը իր զեկուցագրերում պահանջում էր միջոցների դիմել, որպեսզի կանխվի Թուրքիայի ռազմական ուժեղացումը[4]։

Պետերբուրգում տրամադրված էին իրենց ազդեցության մեջ ներառնել օսմանյան կայսրության մայրաքաղաքը, Բոսֆորի արևելյան ափը, Մարմարա ծովն ու Դարդանելը, ինչպես և հարավային Թրակիան՝ մինչև Էնոսմիդիայի գիծը, հավասարապես նաև օկուպացնել Բոսֆորի, Սակարիա գետի և Իզմիրի ծովածոցի միջև ընկած ասիական ափի հատվածները, Մարմարա ծովի կղզիները, Իմբրոսն ու Թենեդոսը[5]։ Ստրատեգիական նկատառումներից բացի, Ռուսաստանի համար մեծ դեր էին խաղում նաև տնտեսական շարժառիթները։

1911 թ. Տրիպոլիտանական պատերազմի ընթացքում նեղուցները ժամանակավորապես փակվեցին։ Դա անմիջապես ազդեց Ռուսաստանի գյուղատնտեսական մթերքների արտահանման վրա, որը 172 միլիոն ռուբլու, այսինքն՝ 45 տոկոս, վնաս կրեց։ 1912 թ. առևտրական բալանսը, նախորդ երեք տարիների համեմատությամբ, կրճատվեց 100 մլն. ռուբլով, որի հետևանքով $^1/_2$ տոկոսով բարձրացավ հաշվեդրույթը[6]։ Խոշոր հողատերերը, առևտրականներն ու բանկիր-

---

[1] Pomiankowski J. Der Zusammenbruch des Ottomanischen Reiches. Erinnerungen an die Türkei aus der Zeit des Weltkrieges. Zürich—Leipzig—Wien, 1928, S. 11 f.

[2] Sazonov S. D. Sechs schwere Jahre. Berlin, 1927, S. 145.

[3] Kerner R. J. The Mission of Liman von Sanders. The Slavonic Review VII, 1928/29, S. 97.

Herzfeld H. Die Limankrise und die Politik der Grossmächte in der Jahreswende 1913/14. Berliner Monatshefte Jg. 11, Nr. 10, 1933, S. 984 f.

[4] Österreich-Ungarns Aussenpolitik von der bosnischen Krise 1908 bie zum Kriegsausbruch 1914. Diplomatische Aktenstücke des österreichisch-ungarischen Ministerium des Auperan, (ÖUA) 25 , Bd. 7. Wien—Leipzig 1930, Nr 9213 (Oberst Pomiankowski an Chef des Generalstabes vom 19. 1. 1914).

[5] Die europäischen Mächte und die Türkei wahrend des Weltkri ges Die Aufteilung der asiatischen Türkei. Adamov E. Dresden 1932 Nr. 16 (Sazonov an seine Betreffen in Paris und London vom 4. 3. 1915).

[6] Kerner R. J. a. a. O., S. 91—93.

ները կառավարությունից բացեիրաց պահանջում էին ապահովել իրենց անտեսական շահերը՝ լինի դա ռազմական թե դիվանագիտական միջոցներով։ Կոստանդնուպոլիսն ու Դարդանելը ռուսական բարձրացող խոշոր բուրժուազիայի տեսադաշտում տնտեսական նշանակություն էին ստանում։ Պանսլավիստական միսիոներների ուղղափառ իդեաները դրանով ձեռք էին բերում իրական քաղաքական մի հիմնավորում, որը ռուսական արտաքին քաղաքականությունը շարունակ մղում էր դեպի ռեակցիոն միլիտարիստական կլիկի ագրեսիվ ուղին[7]։

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա սկզբից ևեթ նրա դիվանագիտությունը հետապնդում էր Բ. Դռան լիակատար ենթակայությունը իր շահերին։ 1912 թ. Փարիզում պատրաստ էին Անգլիայի հետ միասին բաժանել Թուրքիան, հաշվից զուրս թողնելով Ռուսաստանն ու Գերմանիան[8]։ Այդ պատճառով էլ Ֆրանսիայի ֆինանսական մագնատները 1913 թ. պաշտպանեցին պարտված Թուրքիային և Արևելքում ներդրեցին 1.200 մլն. ֆրանկ[9]։ Դրանից 900 մլն. ֆրանկ 1914 թ. բաժնեհանվեց Թուրքիային, որից 320 մլն. ֆրանկ տրամադրվեց Բաղդադի երկաթուղու շինարարությանը. դա բոլոր բաժնետոմսերի գրեթե կեսն էր, քանի որ Գերմանիայի բաժինը կազմում էր ընդամենը 340 մլն. ֆրանկ[10], «Dette Publique Ottomanie»-ում («Օսմանյան պետական պարտք»-ում) Ֆրանսիայի բաժինը հասնում էր 2,4 բիլիոն ֆրանկի կամ կազմում 59%[11]։

Այս հաստատությունների վարչությունը զարգանում էր որպես պետություն պետության մեջ։ Նա բաժանում էր «կոնցեսիաների» եկամուտները, որոնք Բ. Դռանը տրամադրում էին իրեն երաշխիք վարկի դիմաց. դրա հետևանքով կոնսորցիումը միաժամանակ տնօրինում էր պետական եկամուտների մի նշանակալից մասը[12]։

Ֆրանս-բրիտանական դրամական առաջատար ինստիտուտը, «Banque Impériale Ottomane»-ն («Օսմանյան կայսերական բանկը») փաստորեն իրականացնում էր պետական բանկի ֆունկցիա։ Այն վերահսկում էր ծխախոտի մոնոպոլիան, ֆինանսավորում առևտրական ձեռնարկումները և բաց թողնում բանկնոտներ[13]։ 1913 թ. թուրքական առևտրական բալանսի մեջ արտահանման և ներմուծման դեկը բացարձակապես գտնվում էր Ֆրանսիայի և Անգլիայի ձեռքում[14]։ Թուրքիայի 143,2 մլն. թուրք. լիրա պետական պարտքի 62,9%-ը բաժին էր ընկնում Ֆրանսիային, իսկ 22,3%-ը՝ Անգլիային[15]։

Ընդհանրապես և ամբողջությամբ վերցրած՝ Ֆրանսիան Թուրքիայում հանդես էր գալիս նաև «վաշխառուական իմպերիալիզմի» դերում։ Վ. Ի. Լենինը «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի

---

[7] Smith C. Jay. The Russian Struggle for Power, 1914—1917. A Study of Russian Foreign Policy during the First World War. New York, 1956, S. 64 f.

[8] Boev Ju. A. Проблема „интегритета" Османской Империи во внешной политике Франции 1912—1913 гг. Studes balkaniques 2—3, Sofia, 1965, S. 95 uud 105.

[9] Ders. S. 102; Feilner F. Das politische Tagebuch Josef Redlichs 1908—1919. I. Bd. Cras—Köln 1953 (Veröffentlichungen der Kommission für neuers Geschichte Osterreichs 39), S. 211.

[10] Renouvin. Le XIXe siecle: II. De 1871 à 1914. Histoire des relations internationales, v. 6, 1955, S. 274; Trumpener U., Germany and the Ottoman Empire 1914—1918. Princeton, New Jersey 1968, S. 10 f.

[11] Cameron E. France and the Economic Development of Europe, 1800—1914, Princeton, New Jersey 1961, S. 264.

[12] Thobio J. Les intérêts français dans l'Empire ottomen au debut du XXe siècle: étude de sources. Revue historique 235, 1963, S. 365.

[13] Feis H. Europe, the World's Banker 1870—1914. New Haven 1930. S. 320 f.: Cameron E. a. a. O., S. 187—189; Landes D. S. Bankers and Pashas. Cambridge Mass. 1958, S. 60—66.

[14]

	Արտահանում	Ներմուծում (թուրք. լիրաներով)
Անգլիա	4,661,000	8,128,000
Ֆրանսիա	4,294,000	3,591,000
Ավստրո-Հունգարիա .	2,238,000	6,146,000
Գերմանիա	1,234,000	4,688,000

[15] В. В. Готтлиб Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960, стр. 29.

բարձրագույն ստադիա» դարաշրջան կազմող աշխատության մեջ 1917 թ. մատնանշել է, որ Ֆրանսիան առավելապես արտահանում է փոխատվական կապիտալ, որպեսզի ձեռք գցի պետական փոխառությունները, չմասնակցելով, սակայն, ինդուստրիայի բնագավառներին[16]։ Այս պընդումը վերաբերում է նաև Թուրքիային։ Այդ եղանակով հույս ունեին Բ. Դուռը ամուր պահել իրենց բռունցքի մեջ, իսկ երկիրը՝ հյուծել առանց որևէ ռիսկի։

Անգլիայի շահերը Թուրքիայում նույնպես ոչ միայն ստրատեգիական, այլ հավասարապես նաև տնտեսական էին։ 1913—14 թթ. անգլիական առևտրական նավատորմի տոննա-տարողությունը գերազանցեց մյուս երկրներին՝ կազմելով մոտավորապես 6,500,000 տոննա։ 14 մլն. տոննա ապրանք նա տեղափոխեց դեպի Կարմիր ծով, Պարսից ծոց և Սև ծով։ Այդ պարագայում Դարդանելն Ալբիոնի համար պահպանում էր տարանցիկ ուղու իր նշանակությունը[17]։ Իհարկե, Բ. Դռան նկատմամբ պաշտոնական հարաբերությունների սառնությունը ակնհայտ էր։ Սուեզի ջրանցքի կառուցմամբ Դարդանելն ու Անատոլիան դադարեցին բրիտանական կայսրության անփոխարինելի դարկերակը լինելուց։ 1901 թ. լորդ Սոլսբերին բացեիբաց հայտարարեց, թե Բրիտանիան կեղծ նժույգի վրա է դրավ դրել. դրանով նա միաժամանակ քննադատեց Դիզրայելիի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում[18]։ Foreign Office-ը չէր կարող անտարբեր լինել Գերմանիայի ազդեցության նկատմամբ, որը նկատելիորեն ուժեղացավ Աբդուլ Համիդ II-ի ժամանակ։ Այդ պատճառով էլ նա հույս ուներ, թե 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունը կբերի արտաքին քաղաքական կուրսի փոփոխություն, և Բ. Դուռը վերստին կթեքվի Լոնդոնի կողմը. սըր է. Գրեյը առանձնահատուկ պոռթկումով հեղափոխությունն անվանեց «պատմության մեջ տեղի ունեցած բարեբեր փոփոխություններից մեկը», իսկ Քամիլ փաշային փառաբանեց իբրև Արևելքի Միրաբոյի[19]։

Այս պատրանքները ցնդելուց հետո էլ Գրեյը ուշադրություն էր նվիրում «Բոսֆորի ափի հիվանդ մարդուն», որովհետև նրան դուր չէր գալիս ո՛չ ռուսական էքսպանսիան և ո՛չ էլ գերմանական գերակշռությունը։ Թուրքական նավատորմը, շնորհիվ անգլիական ռազմական միսիաների, լայն չափով գտնվում էր անգլիական ձեռքերում, և 1913 թ. հոկտեմբերին կնքված նավանորոգման պայմանագիրը փաստորեն Լոնդոնի համար գործնականորեն մենաշնորհ վիճակ էր ապահովում թուրքական ամբողջ նավաշինության, նավանորոգման և նավասարքավորման վրա[20]։ Այդ հանգամանքներում արտաքին գործերի մինիստրությունում սառն ու բացասաբար էին վերաբերվում նաև արաբական անջատողական պլանին։ Սրդուլլահը՝ Մեքքայի էմիրի որդին, 1914 թ. փետրվարին, Կահիրեում անգլիական օգնության վերաբերյալ բանակցում էր լորդ Քիթչենների հետ, եթե իր հայրը ապստամբեր Ստամբուլի դեմ։ Քիթչենները դիտողության կարգով նկատեց, թե Անգլիան Թուրքիայի հետ բարեկամական հարաբերություններ ունի և մտադիր չէ միջամտելու նրա ներքին գործերին։ Այդ նույնը կրկնեց սըր Ռոլանդ Սթորսը՝ ապրիլի վերջերին։ Արաբների նկատմամբ բրիտանական շահագրգռությունները այն ժամանակ սահմանափակվում էին Մեքքա գնացող հնդկական ուխտավորների անվտանգության ապահովմամբ[21]։ Գրեյը նմանապես չբաժանեց Սազոնովի տեսակետը 1913 թ. գերմանա-թուրքական համաձայնագրի հետևանքների վերաբերյալ և թույլ չտվեց որևէ միջամտություն, այլ բավարարվեց սոսկ գրավոր մի հարցմամբ՝ ուղղված Ստամբուլի իր դեսպանին։ Ռուսական իմաստով նեղուցների հարցի լուծմամբ Լոնդոնը բնավ չէր կարող շահագրգռված լինել[22]։

Բացի դրանից, Անգլիան երկյուղ էր տածում նաև սեփական ծովային միսիայի և շահավետ նավատորմային պայմանագրերի[23] համար, որոնք չէր ցանկանում վտանգի ենթարկել։ Դեռևս

---

[16] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 320—321։

[17] Cottlieb W. W. a. a. O.. S. 94.

[18] Kurat Y. T. How Turkey drifted into World War I. Studies in International History, ed. by K. Bourne and D. C. Watt, London 1967, S. 293.

[19] Cunnigham K. The wrong horse?—A study of Anglo-Turkish relations before the First World War. St. Antony's Papers 17, Middle Eastern Affairs 4. Oxford 1965, S. 68

[20] Fischer F. Weltpolitik, Weltmachtstreben und deutsche Kriegsziele. HZ. 199, 1964, S. 312.

[21] Jaschke G. Ein scherifisches Bündnisangebot an Mustafa Kemal. Ein Beitrag zur Geschichte der arabisch-turkischen Beziehungen. Der Orient in der Forschung. Festschrift für O. Spies, Wiesbaden 1967, S. 377.

[22] Herzfeld H. a. a. O., S. 857 und 992.

[23] А. С. Аветян, Германский империализм на Ближнем Востоке. М., 1966, стр.. 78.

1911 թ. Պոմյանկովսկին դիմեց Թուրքիայի ծովային մինիստրությանը՝ առաջարկելով երկու դրեդնոուդների («Սուլթան Օսմանի» և «Ռեշադիյեի») պատվերները հանձնել Տրիեստի Ստաբիլիմենտո տեքնիկո ֆիրմային[24]։

Իհարկե, Վիլհելմշտրասեի համար վտանգով հղի սխալ էր այն կարծիքը, թե այսպիսի պարագայում Անգլիան կարող է զատվել Անտանտից, մի պատրանք, որը ամենից առաջ համակեց կայզերին[25]։ Ռայխսկանցլերը ևս, 1914 թ. օգոստոսի 8-ին, դեռ հավատում էր Անգլիայի միջնորդությանը, ճիշտ այնպես, ինչպես դա տեղի ունեցավ գերմանական զինվորական միսիայի շուրջը ծագած վեճի ընթացքում[26]։

Ինչպես Գեորգ թագավորը, այնպես էլ Գրեյը Փարիզին հասկացնել տվին, որ իրենք Ռուսաստանը չեն թողնի բախտի քմահաճույքին, եթե նա հարկ ունենա դիմելու Անգլիայի բարեկամությանը[27]։ Արդեն 1914 թ. հունվարին ռայխսկառավարությունը պետք է հաշտվեր այն վիճակի հետ, որ Անտանտը միասնաբար կանգնած է Գերմանիայի դեմ հանդիման, և դա հարկադրում է իրեն պատերազմի նախօրյակի դիվանագիտական մեծ կոնֆլիկտում դիմել նահանջի։ Հեղինակությունը հաջողվեց փրկել միայն մեծ ջանքերի գնով՝ թուրքական մարշալի մոտ Լիման ֆոն Սանդերսի նշանակումը սահմանափակելով սոսկ զինվորական խորհրդատուի պաշտոնով[28]։ Լոնդոնի համար ևս պարզ էր ռայխի իմպերիալիստական նպատակադրումը, որի հետևանքով Թուրքիան պիտի դառնար սոսկ գերմանական մի գաղութ։ Այդ պատճառով էլ Վիլհելմշտրասեն վճռականորեն հանդես եկավ նաև բաժանման պլանների դեմ, որպեսզի միայն ինքը մեկընդմիշտ դառնա դրության տերը[29]։ Պետական քարտուղար ֆոն Ցագովը 1913 թ. մայիսին կոմս Բերխտոլդին տեղեկացրեց Գերմանիայի հավակնություններին օսմանյան կայսրության հանդեպ՝ իր ազդեցության տակ գցել ամբողջ Անատոլիան՝ ամփոփված Ալեքսանդրետի ծովածոցով և Մերսին-Ադանայով, բացառությամբ Հայաստանի[30]։ Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստրի համար պարզ դարձավ, որ Գերմանիայի վերջնական նպատակը Թուրքիայի քաղաքական, տնտեսական և ռազմական լիակատար կախվածությունն է[31]։ 1917 թ. ապրիլի 1-ին պետական քարտուղար Շտումը դա խոստովանեց բացեիբաց. քանի որ Թուրքիան ի վիճակի չէ ո՛չ վճարելու և ո՛չ էլ մարելու իր ռազմական պարտքերը, ապա Գերմանիան պետք է պնդի տնտեսական բնագավառի, հատկապես երկաթուղային և արկային կոնցեսիաների փոխհատուցման վրա, և պահանջի անգլիական ու ֆրանսիական տնօրինության տակ գտնվող օբյեկտների վերացում[32]։ 1914 թ. նմանօրինակ կողոպտչական լայն պլանները, բնականաբար, դեռևս տանելի էին։ Բաղդադի երկաթգծի ձեռնարկությունը, որը, ինչպես տեսանք, այլևս չէր գտնվում միայն գերմանական ձեռքերում, ֆինանսական թույլ մի գործիք դուրս եկավ՝ իրականացնելու համար քաղաքական ճնշումը Թուրքիայի վրա։ Հավասարապես նույնը տեղի ունեցավ առևտրական ներթափանցման ասպարեզում[33]։ Երկընտրանքը Գերմանիային հարկադրեց համաձայնության գալ մյուս իմպերիալիստական տերությունների հետ։ Այսպես, լոկ մաքսերի բարձրացման միջոցով երաշխիք

---

[24] Pomiankowski J. a. a. O., S. 78 f.

[25] Fischer F. Weltpolitik, a. a. O., S. 314; Avetjan A. S. a. a. O., S. 95.

[26] Zechlin E. in seinem Diskussionsbeitrag auf dem 12. internationalen Historikerkongreß in Wien zu den „Problemes politiques de La Ière guerre mondiale" V Actes, Wien 1968, S. 731.

[27] Zechlin E. Die türkischen Meerengen - ein Brennpunkt der Weltgeschichte. Ströme und Meere in Geschichte und Gegenwart. Veröffentlichung der J. Jungius—Gesellschaft der Wiss. Hamburg. Göttingen 1964, S. 47.

[28] Fischer F. Griff nach der Weltmacht. Die Kriegszielpolitik des kaiserlichen Deutschlands 1914/18. 3. Aufl. Düsseldörf 1964. S. 54.

[29] Rathmann L. Stoßrichtung Nahost 1914-1918. Zur Expansionspolitik des deutschen Imperialismus im ersten Weltkrieg. Berlin 1963, S. 23—25.

[30] Belege bei Klein F. Die Rivalität zwischen Deutschland und Österreich—Ungarn in der Türkei am Vorabend des ersten Weltkrieges. Politik im Krieg 1914—1918. Studien zur Politik der deutschen herrschenden Klassen im ersten Weltkrieg. Berlin 1964, S. 3.

[31] Haus-Hof-und Staatsarchiv Wien (H. H. St.) XII PA 208 (Weisungen) Berchtold an Pallavicini vom 9. 2. 1916 f. 12—12v.

[32] Fischer F. Griff nach der Weltmacht, a. a. O., S. 788.

[33] Trumpener U. a. a. O., S. 8 f.

ձեռք բերվեց Բաղդադի երկաթգծի փոխառությունների համար։ Սակայն դա պահանջեց Ֆրանսիայի և Անգլիայի համաձայնությունը[34]։ Պատերազմական պլանում Թուրքիան պետք է իրականացներ նեղուցների ժամապահի դեր՝ Ռուսաստանը արևմտյան տերություններից բաժանելու և միաժամանակ ռուսական հարավային թեը չլատելու համար։ Դրա հետ միասին Ավստրո-Հունգարիայի կառավարությունը հույս ուներ նվաճելու դեպի Եգիպտոս և Հնդկաստան տանող մի ցատկահարթակ՝ Անգլիային իր ամենաղգայուն վայրում հանդիպել կարողանալու համար[35]։ Դժբախտությունն այն էր, որ գլխավոր շտաբը շատ ցածր էր գնահատում թուրքական բանակի ռազմական արժեքը և այդ պատճառով էլ հանդես էր գալիս պաշտոնական որևէ միավորման դեմ։ 1914 թ. մարտին Մյոլտքեն Թուրքիան բնութագրեց որպես ռազմական ոչնչություն։ «Եթե առաջ Թուրքիայի մասին խոսում էին իբրև հիվանդ մի մարդու, ապա այժմ պետք է խոսել արդեն հանգուցյալի մասին... Մեր ռազմական միսիան նման է բժիշկների կոլեգիայի, որը կանգնած է անբուժելի հիվանդի մահճի մոտ»[36]։ Ո՛չ գլխավոր շտաբականները, ո՛չ քաղաքագետները և ո՛չ էլ բանկիրները գլխի չէին ընկնում այստեղից զոնե հետևություն անել ռազմական ու քաղաքական պլանների հնդրման վերաբերյալ։ Ընդհակառակը, հետևողականությունը թելադրում էր ամբողջ եռանդով «պաշտպանել» օսմանյան կայսրությունը, նպատակ ունենալով այնպես ուժեղացնել սեփական դիրքերը, որ իրենք դառնան գրության տերն ու տնօրենը[37]։ Այդ պատճառով էլ ռայխի կառավարությունը կասկածամտորեն և նախանձախնդիր կերպով հետևում էր յուրաքանչյուր ուար ոտնձգության Անատոլիայի ազդեցության իր ոլորտներում, եթե դա անգամ վերաբերում էր իր դաշնակից Ավստրո-Հունգարիային, որին Վիլհելմ II-ը բազմիցս հավաստիացրել էր իր «ենիբելունգյան հավատարմությունը» և արտահայտել իր համակրանքը դուալիստական սիստեմի հանդեպ[38]։ Երբ երկմիապետության ֆինանսական շրջանները 1913—14 թթ. իրենց համար հող էին նախապատրաստում Փոքր Ասիայում և ցանկանում էին Ադալիայի սանջակում կոնցեսիաներ ձեռք բերել, ֆոն Ցագովը դրան արձագանքեց դժկամությամբ։ Հավասարապես Ալայայի շրջանում գերմանացիները արդելակեցին Բալաուսպլատցի նաև տնտեսական գործունեությունը և սպառնացին Ֆրանսիայի, համապատասխանաբար նաև Անգլիայի հետ միավորվել՝ սեփական շահերը միասնաբար պաշտպանելու և միավորված գործողությամբ ստիպելու հարգել իրենց առանձնաշնորհումները[39]։ Որ Անատոլիայում բռնկված հակադրությունները երկու տերությունների՝ Գերմանիայի և Մեծբրիտանիայի միապետության միջև գոյություն ունեցող հակասությունների երկար շղթայի սոսկ մի օղակն էին միայն, հանրահայտ էր և կասկածից վեր[40]։

Պոմյանկովսկին չէր դադարում իր զեկույցներում Վիեննային զգուշացնել բոլոր տեսակի պատրանքներից, որովհետև Գերմանիան «Թուրքիան համարում էր իր էքսպանսիայի բացառիկ

---

[34] Fischer F. Weltpolitik, a. a. O., S. 309.

[35] Ders. Griff nach der Weltmacht, a. a. O., S. 140 f.

[36] Feldmarschall Conrad. Aus meiner Dienstzeit 1906—1918. Bd. 3. Wien—Leipzig—München 1922, S. 612. Sanders berichtete nach Berlin, daß in der Provinz die Soldaten weder Schuhe, Uniformen noch Wäsche zum Wechseln besaßen: ÖUA VII, Nr. 9505. Կ вопросу о союзе см. Лутшувейт Е. Ф. Турция в годы первой мировой войны 1914—1918 гг. М., 1966, стр. 27.

[37] ÖUA. VIII. Nr. 9911.

[38] Dazu Kořalka, J. Vznik československe republiky roku 1918 v oficiální politice nemecke říse. Českoslov. Časopis Hist. XVI, 1968, S. 872.

[39] Klein F. a. a. O., S. 10.

[40] Հմմտ. այդ մասին տես իմ վերջին հոդվածում. „Die Türkei am Vorabend des ersten Weltkrieges im Spannungsfeld der Großmächte", Zschr. f. Geschichtswiss. XVI, 1968, bes. S. 1567—1562. Zu den Gegensätzen in der Balkanpolitik und den außenpolitischen Prinzipien Österreich—Ungarns May, A. J. The Hapsburg Monarchy 1867—1914. Cambridge, Mass. 1951, S. 465 und 472. 1914 թվականի հուլիսի 23-ին Լիխնովսկին գրում էր Ցագովին՝ «Բալկաններում ավստրիական ազդեցության նահանջը մինչև այժմ շատ օգտակար ձևով նպաստել է մեր այնտեղի տնտեսական շահերին։ Տնտեսապես մենք և Ավստրիան Բալկաններում մրցակիցներ ենք և այնտեղ ամենուրեք գերմանական առևտուրը ավելի ու ավելի դիրքեր է գրավում, որ առաջ պատկանում էր Ավստրիային», Geise, I. Julikrise und Kriegsausbruch 1914. Eine Dokumentensammlung Bd. I. Hannovar 1963, Nr. 238.

չրշանն ու շահագործման օբյեկտը և մերժում ազատ մրցության վերաբերյալ միապետության որևէ իրավունքը»[41]։

Ռայխը համեմատաբար ավելի մեղմ վերաբերվեց Իտալիային, որի նոյակ միությունից դուրս գալը պետք է արգելակվեր կոնցեսիաների միջոցով։

1913 թ. Հռոմը Ադալիայում իր համար ստեղծեց ազդեցության ոլորտ և տիրեց Հերակլեայի լեռնարդյունաբերության շահագործման կոնցեսիաներին։ Կայսրության մասնատման դեպքում նրա ցանկություններն է՛լ ավելի բարձրագոչ էին դառնալու։ Թուրքիայում Իտալիայի կապիտալ ներդրումները 1911 թ. կազմում էին 100 մլն. ֆրանկ։ 1906—1910 թթ. արտահանումը ավելացավ 90,6 տոկոսով[42]։ Բեռլինի նման Հռոմը ևս ըմբոստանում էր ավստրիական պլանների դեմ Անատոլիայում ու Ալբայում և կանխում երկմիապետության յուրաքանչյուր էքսպանսիա։ Վիլհելմշտրասեից դրան ոչնչով չէին առարկում։ Ընդհակառակը, դեսպան Բոլատին երաշխիք տրվեց, թե միապետության փլուզման դեպքում, մի բան, որ վաղ թե ուշ կատարվելու էր, Իտալիան կարող է հույս դնել մրցության ավարից համապատասխան բաժին ստանալու վրա։ Գերմանական դիվանագետները այդ մասին Վիեննայում անսքող կերպով շատախոսում էին ֆրանսիական դեսպանորդ Ա. Դյումենի հետ[43]։

Այսպիսով, իմպերիալիստական երկրների ռազմական և մրցակցային պայքարը ալեկոծվում էր նաև նրանց խմբակցությունների ներսում։ Երկու խմբավորումն էլ միասնական այն նպատակն էին հետապնդում, որ այս կամ այն ձևով տիրեն Թուրքիային, բաժանեն այն կամ գաղութացնեն։ Թվում էր, թե Բ. Դռանը ազատություն է տրված լոկ ընտրելու իր սեփական դահճին, քանի որ մեծ տերությունների դիվանագիտական բոլոր լարախաղացությունների ժամանակ կարելի էր Բոսֆորի ափին հույս դնել կախաղանի ժամկետը երկարաձգելու վրա միայն։

Ինչպե՞ս էր երիտթուրքերի կառավարությունը 1914 թ. արձագանքում այս իրավիճակին։

Վ. Ի. Լենինը ռուս-ճապոնական պատերազմին և 1905—1907 թթ. ռուսական հեղափոխությանը վերագրում էր ուժեղ մի ազդեցություն ասիական ժողովուրդների քաղաքական կյանքում կատարած զարթոնքի վրա[44]։ 1908 թ. երիտթուրքերի հեղափոխությունը նա բնութագրում էր որպես բուրժուական, սակայն միաժամանակ նկատում նրա սահմանափակվածությունը, այն, որ հեղափոխությունը մասսաներին չգրեց շարժման մեջ։ Նրանում ժողովուրդը ակտիվ կերպով, բացեիրաց հանդես չեկավ իր տնտեսական և քաղաքական պահանջներով[45]։ Սպաներն ու մտավորականները, հեղափոխության կրողները, նույնպես չէին բողոքում տիրող նեխված ֆեոդալիզմի դեմ, այլ առայժմ ըմբոստացել էին միայն Արդուլ Համիդի դեսպոտիզմի դեմ[46]։ Մյուս կողմից, համենայն դեպս, սխալ կլիներ Ռեզեի գործիչներին մի կողմ նետել որպես պահպանողականների և երազողների, որոնք պառլամենտական մեխանիզմի մեջ տեսնում էին իրենց երկրի բարօրությունը, մի մեխանիզմ, որը իրենք ցանկանում էին ներմուծել Արևմուտքից[47]։ „Ittihad ve terakki"-ի (Merkez-i Umumi) երիտթուրքական կենտրոնական կոմիտեում նստած էին այնպիսի մարդիկ, որոնք Թուրքիզմի ազգայնական ծրագրի մեջ տեսնում էին Թուրքերի՝ իբրև ազգի, զարգացման պարտադիր նախապայմանը, որի միջոցով միայն հնարավոր էր իրականացնել իրենց միտած եվրոպականացումը[48]։ Տ. Զ. Տունայան Թուրքական հարուստ

---

41 Pomiankowski J. a. a. O., S. 303.

42 Яхимович З. П. Основные проблемы внешней политики Италии 1908—1914 гг. Историческая наука на Урале за 50 лет: 1917—1967, вып. 2, Свердловск, 1968, стр. 119.

43 Cottlieb W. W. a. a. O., S. 391.

44 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 265։

45 Նույն տեղում, հ. 25, էջ 537։

46 Հմմ. Миллер А. Ф. Буржуазная революция 1908 г. в Турции, «Советское востоковедение», № 6, 1955, стр. 33.

47 So Cunningham A. a. a. O., S. 64

48 Երիտթուրքական կուսակցության մեջ առանձին հոսանքների մասին տե՛ս Tunaya T. Z. Türkiyenin Siyasi hayatinda batililasma harekati (Եվրոպականացման շարժումը Թուրքիայի քաղաքական կյանքում), Istanbul, 1960, էջ 89, ինչպես նաև՝ Казанова Е. Ю. Идеология буржуазного национализма в период младотурок (1908—1914), Баку, 1966, стр. 39; Ընդհանրացնող մի տեսություն է նաև իմ փոքր հատվածը՝ Wesen und Formen des türkischen Nationalismus (Թուրքական նացիոնալիզմի բնույթն ու ձևը), Zeitschr f.

նյութերի օգնությամբ ապացուցում է, որ այս խումբը, ամեն տեսակի գաղափարական վարագույրներով հանդերձ, դուտ քաղաքական-գործնական նպատակներ էր հետապնդում։ Բազմազգ պետություն մեկ ազգի մեջ կենտրոնացնելով, Թուրքիան պետք է դառնա մի գործոն, որն ամրապնդելու է „Islâm beynelmilleliyeti"-ն՝ «Իսլամական միությանը», և միաժամանակ ուժեղացնելու է խարխլված սուլթանության հիմքերը[49]։ Այս ծրագրով նրանք այնուհանդերձ հարկադրարար բացեցին ռեակցիոն պանթուրքիզմի ջրարբելակները, որը, ըստ Ե. Յու. Կազանովայի, ներկայացնում էր թուրքիզմի մյուս երեսը[50]։ Հակառակ օսմանյան լիբերալների, երիտթուրքերը ձգտում էին կենտրոնացված պետության։ Նրանց աչքում այս կենտրոնացումը նույնացվում էր պանթուրքիզմի հետ։ Համաձայնությամբ հրապարակ եկած թուրքացումը ոչ-թուրք ենթականերին մղում էր ուժեղ դիմադրության և սրում կայսրության ներքին ճգնաժամը[51]։ Առաջին մեծ հիասթափությունը հաղթական հեղափոխականներն ապրեցին 1908 թ. դեկտեմբերի 17-ին պառլամենտի բացման ժամանակ, պառլամենտ, որը պետք է դրսևորեր կայսրության բոլոր ժողովուրդների միասնությունը և հանդիսանար նոր կարգի ցուցադրումը։ Նոր կաբինետի արտաքին քաղաքականությունը ընկավ քննադատության կրակի տակ և ոչ-թուրք պատգամավորները չէին էլ մտածում կենտրոնացման գաղափարները պաշտպանելու մասին։ Պարզ էր դառնում, որ օսմանյան կայսրության միասնության ժամանակներն անցել են[52]։ Սկսած 1909 թ. արաբների մեջ աճում էր հակաթուրքական տրամադրությունը, որը սնունդ էր առել թուրքացման լոզունգներից։ Սակայն ուժեղ օպոզիցիան ամենից առաջ ուղղված էր կենտրոնացման դեմ։ «Al-Qahlaniyya» արաբական գաղտնի ընկերությունը պահանջում էր կայսրության մասնատումը երկու ինքնուրույն, լոկ անձնական ունիայով միավորված պետությունների՝ դանուբյան միապետության կերպարանքով։

Նույնն էր պահանջում նաև գաղտնի «երիտարաբական ընկերությունը» (Al-gam'ivya al arabiyya al-fatat), որը 1909 թ. հիմնադրել էին արաբ ուսանողները[53]։ Սոցիալական ռեֆորմների մասին առհասարակ խոսք չկար։ Նախկինի պես թուրք գյուղացին տնքում էր ֆեոդալ ազնվականության լծի տակ։ Երբ երիտթուրքական ժուռնալիստներն ու մտավորականները նույնիսկ պերճախոս կերպով պատկերում էին անատոլիական ռայաների աղքատությունը և մերկացնում չարիքի արմատները, կուսակցական կոմիտեի ղեկավարները դրանից ամենևին հետևություններ չէին անում[54]։ Ընդհակառակը, նրանք հույս ունեին ներսից և դրսից «մեղմացնելու» միջոցով արժանանալ մեծ տերությունների բարյացակամությանն ու պաշտպանությանը։ Լենինը հեգնանքով մտրակում է այս գործելակերպը, որը ձեռնտու էր միայն իմպերիալիստներին։ «Երիտասարդ թուրքերին գովում են չափավորության և զսպվածության համար, այսինքն՝ գովում են թուրքական հեղափոխությունը այն բանի համար, որ նա թույլ է, նրա համար, որ նա չի արթնացնում ժողովրդի ստորին խավերը, չի հարուցում մասսաների իսկական ինքնուրույնություն, նրա համար, որ այդ հեղափոխությունը թշնամի է օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին,— և միաժամանակ շարունակում են առաջվա նման կողոպտել Թուրքիան»[55]։

Երիտթուրքերը այդ պետք է շուտ հասկանային։ Վերջապես՝ նրանք հույս ունեին, թե սահմանադրական միապետության և մեղմացնող քաղաքական ռեֆորմների վարագույրի տակ արևմտյան տերությունների աչքում վայելուչ տեսք կունենան, դրանով իսկ կվերացնեն կապիտուլացիաների սիստեմը և կկարողանան դրամատեր պետություններին տրամադրել կատարելու ինդուս-

---

Geschichtswissenschaf. XVI, 1968, S. 1301—1308: Եվրագրության կողմից՝ երիտթուրքերի պանիսլամիստական ծրագրերի քննադատությունը տես նաև նույն հեղինակի „Пантюркизм и некоторые тенденции современной турецкой историографии" հոդվածը, «Լրաբեր» հաս. գիտ. № 6 (1966)։

[49] Tunaya T. Z. a. a. O., S. 87.

[50] Gasanova, E. Ju. a. a. O., S. 42.

[51] Vgl. Berkes N. The Development of Secularism in Turkey. Montreal 1964, S. 338—346.

[52] Հեղափոխության ղորեղ հենարանը հանդիսացող ալբանացիների մասին տե՛ս Bartl P. Die albanischen Muslime zur Zeit der nationale Unabhängigkeitsbewegung (1878—1912). Wiesbaden 1968 (Albanische Forschungen Bd. 8.), S. 166.

[53] Jäschke C. Ein scherfisches Bündnisangebot, a. a. O., S. 375 f.

[54] Gasanova a. a. O., S. 90 und 98; Miller A. F. a. a. O., S. 44.

[55] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 268—269։

տրիալ ձեռնարկումներ երկրի ներսում. այսպիսով, մեծ հիասթափությունը կրնկակոխ հետապընդում էր իմպերիալիստական ոչ մի շահագործող չէր մտածում կապիտուլացիաների հաստատված սիստեմի վերացման մասին, ոչ ոք շահագրգռված չէր կայսրության տնտեսական ապաքինմամբ. յուրաքանչյուրը մտահոգված էր նրանով, որպեսզի յուղոտ պատառ ստանա վրա հասնող փլուզումից[56]։ Ռենեգատ Ալեքսանդր Հելֆանդի (Պարվուսի) ազդեցությամբ կուսակցությունը ազատագրվեց լիբերալ կապիտալիզմի պատրանքներից և իր դրոշի վրա գրեց. «Տնտեսական անկախությունը ազգային անկախության նախապայման է» լոզունգը։ Սրա նախապայմանը կապիտուլացիաների վերացումն էր։ Դրա համար նոր կառավարությունը պետք է պայքարեր բոլոր միջոցներով։ Կապաքինվի՞ իրենց տնտեսությունը, օսմանյան կայսրությունը միջնադարից կտեղափոխվի՞ դեպի նոր ժամանակները՝ այնժամ կոչնչացվեն իմպերիալիստական կապանքները[57]։

1911 թ. Տուգրուլ Ալպը «Türk Vurdu»-ում տպագրեց մի հոդված՝ Sark sarklilarindir (Ասիան՝ ասիացիների համար) նշանաբանով, իսկ Մեհմեդ Տեյֆիկը իր «Barbar» բանաստեղծության մեջ ասաց. «դու ուզում ես ինձ սպանել, ախ, դու նենգ Եվրոպա։ Բայց ես դեռ ապրում եմ և դեռ զգում եմ ատելություն քո հանդեպ։ Ես դեռ ուժ ունեմ՝ քո ճնշումը թոթափելու, ես մի վրիժառու եմ։ Քո հարվածը կռել է իմ հոգին, ա՜խ, դու ավազակային էակ»[58]։

Առաջին Բալկանյան պատերազմում կրած պարտությունից հետո կուսակցությունը 1913 թ. հունվարի 19-ին հիմնադրեց «Ազգային պաշտպանության միությունը» («Mürdafaa-i Milliye Cemiyeti»-ն)։ Ազգային կրթության և ժողովրդի առողջության բարելավման պահանջի հետ միասին միությունը նպատակ ուներ ստեղծել զինված մի ուժ, որը անհրաժեշտության դեպքում կարող է աճապարել մարտադաշտ՝ ժողովրդական պատերազմ վարելու համար[59]։ Բայց երիտթուրքական դիկտատուրան, որը երկրի ներսում կիրառում էր տեռորի նույն մեթոդները, ինչպիսիք գործադրում էր Աբդուլ Համիդ II-ը[60], սկզբից ևեթ հաշվի չառավ ժողովրդին ոտքի հանելու պարագան, որովհետև առանց սոցիալական ռեֆորմների անհնարին էր ստեղծել հակաիմպերիալիստական ժողովրդական լայն շարժում։ Դրան պետք է ավելացնել և այն, որ տնտեսական կատաստրոֆիկ վիճակը կառավարությանը ստիպում էր շարունակ դիմել արտասահմանյան նոր փոխառություններ։ 1908 թ. պետական պարտքը կազմեց 59,1 մլն. թուրքական լիրա։ 1908—1914 թթ. Բ. Դուռը վերցրեց ևս 45,8 մլն. լիրա փոխառություն։ Առևտրական բալանսը 1905—1906 թթ. միջին հաշվով տարեկան ցույց էր տալիս 13—14 մլն. լիրայի պասիվ հոդվածներ։ 1909 թ. այն բարձրացավ մինչև 16,4 միլիոնի, իսկ 1910—1913 թթ.՝ տարեկան հասավ 19—20 միլիոնի[61]։ 1914 թ. հունվարին տևական ֆինանսական ճգնաժամը հասավ իր բարձրակետին։ Սպաներն ու ծառայողները մնացին առանց աշխատավարձի։ Ֆինանսների մինիստր Ջավիդ բեյը փնտրում է նոր փոխառություններ, ըստ որում եվրոպական դրամատիրական մոնոպոլիաներին և մաքսատերերին առաջարկվեց 15 տոկոս շահույթ[62]։ Քանի որ Բեռլինը դրամական դեֆիցիտի հետևանքով ի վիճակի չէր ընդունելու այդ առաջարկը, Փարիզն աճապարեց փոխարինել նրան։ Բաղդադի երկաթուղու և Ցաֆա, Հայֆա, Տրիպոլի նավահանգիստների, ինչպես և Հերակլեայի վրա վիթխարի կոնցեսիաներ տալու գնով Ջավիդը ստացավ ցանկացած գումարը[63]։

---

56 Այսպես, Ռուսաստանն ու Անգլիան 1908 թ. հունիսին, հեղափոխության բռնկումից դեռևս առաջ, համաձայնեցին Մակեդոնիայում իրականացնել ռեֆորմ, որը հավասարազոր էր բաժանման և որը 1909 թ. տակավին ընդհանուր ճանաչում էր գտնում, երբ էդվարդ VII-ը Իշլ կատարած իր այցելության ժամանակ կրկին մի կողմ նետեց այն։ Դեսպան սըր Ջորջ Լաուաերը համենայն դեպս գրում է, թե երիտթուրքերի կառավարությունը շատ ծանր ընդունեց այդ պլանը, քանի որ այն հակադրվում էր կայսրության ամբողջականությունը պահպանելու իր քաղաքական սկզբունքներին։ Տե՛ս Jäschke G. Die Zusammenkunft von Reval und die Jungturkische Revolution, Die Welt des Islam VI, 1961, S. 266.

57 Berkes N. a. a. O., S. 333—337.

58 Gasanova. a. a. O., S. 80 und 82

59 Չմմտ. Jaschke G. Beitrage zur Geschichte des Kampfes der Türkei um ihre Unabhängigkeit. Die Welt des Islam V, 1957, S. 19 f.

60 Mandelstam A. Le sort de l' Empire Ottoman. Paris 1917, S. 49 f.

61 Miller A. F. a. a. O., S. 44, A. 44 und 45.

62 Mandelstam. a. a. O., S. 73.

63 Fischer F. Weltpolitik, a. a. O., S. 318 f.

Այսպիսի պարագաներում կառավարությունը արդյոք դեռ ընդու՞նակ էր արտաքին քաղաքական մանյովրներ կատարելու։

Ittihad ve terakki-ն և նրա ներկայացուցիչները, չնայած իրենց ռազմական պարտությանն ու ֆինանսական ստրկացված վիճակին, Բալկաններում ստացան գործելու լայն ազատություն։ Տեֆիկ Բիյիկլիօղլուն ապացուցել է, որ Բալկանյան պատերազմներից հետո Թուրքիան բալկանյան պետությունների աչքում դարձել էր միություն ստեղծելու խոստումնալից մի պարտնյոր։ Արդեն 1912 թ. Հունաստանը Բ. Դռանը առաջարկում է միություն կազմել ընդդեմ Բուլղարիայի և հետևում է այդ պլանի իրականացմանն-ընդհուպ մինչև առաջին աշխարհամարտի բռնկումը։ 1914 թ. հուլիսի վերջին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան նախապատրաստվում էր Բրյուսելում հանդիպել Վենիդելոսի հետ։ Ստամբուլում հույս ունեին ետ ստանալ կորցրած էգեյան կղզիները[64]։

Սակայն Հալիմը միաժամանակ բանակցում էր նաև Բուլղարիայի հետ՝ Հունաստանի հաշվին բավարարվելու համար։ 1914 թ. օգոստոսի 19-ին կնքվեց համապատասխան պայմանագիր։ Բայց քանի որ անհրաժեշտ չեզոքության վերաբերյալ ռումինական խոստումները բացակայում էին, ապա այդ պայմանագիրը մնաց անհետևանք[65]։

Բալկանյան պետությունների էքսպանսիվ ճնշումը, որը պարզ կերպով դրսևորվեց Հունաստանի և Ռումինիայի վերաբերյալ մեր բերած օրինակներում, Վ. Մարկովը համարում է այդ «չհասունացած կառույցի բնորոշ գիծը. սրանց (բալկանյան երկրների — ծանոթ. թարգմ.) զարգացման ընթացքը որոշակի էր և դրա հետ միասին արգելակված էր նրանով, որ նրանք ոչ միայն օսմանյան կայսրության բնական քայքայման արդյունքն էին, այլև հանդիսանում էին համաչափ զարգացմամբ զառամած դանուբյան միապետության կանխատեսված ժառանգը»[66]։

Սակայն 1914 թ. չափաղանց բզկտված օսմանյան կայսրությունը ևս կարծում էր, թե հասել է ժամը կորցրածը վերանվաճելու համար։ 1914 թ. մայիսի 5-ին թուրքական պառլամենտի նախագահ Խալիլ բեյը պատգամավորներին բացեիբաց հայտարարեց՝ «այդ պատճառով էլ ես այս ամբիոնից խնդրում եմ իմ ժողովրդին՝ երբեք մոռացության չտալ մեր թանկագին Սալոնիկը, ազատության և սահմանադրության օրրանը։ Նմանապես չպետք է մոռանալ Մոնաստիրը, Ուսկյուբը, Սկութարին, Յանիանան և մեր ամբողջ գեղատեսիլ Ռումելիան... որ մենք մեր սահմանի հենց այն կողմում պետք է ազատագրենք մեր եղբայրներին և մեր հայրենիքի համար նահանգներ վերանվաճենք»։ «Ikdam» լրագիրը 1914 թ. հուլիսի 15-ին գրում էր. «Այն դեպքում, երբ Սերբիան կներքաշվի պատերազմի մեջ... մեծ հույս կրացվի, որպեսզի մենք կարողանանք օգտվել այդ իրադրությունից, եթե ուզում ենք մեծ զգուշությամբ և խելացի կերպով իրականացնել մեր նպատակները»[67]։ Թե այս առիթով ինչպիսի մեծ սպասելիքներ էին գուրգուրվում, ցույց են տալիս Զ. Շաքիրի հավաքած այն ժամանակվա պաշտոնական և կիսապաշտոնական կարծիքները[68]։ Այնուամենայնիվ արտաքին և ներքին գործերի մինիստրները (ներքին գործերի մինիստրը Թալաաթ բեյն էր) նկատեցին, որ առանց որևէ մեծ տերության հովանավորությունն ստանալու բալկանյան միությունը չի կազմալուծվի։ Այդ պատճառով էլ Սայիդ Հալիմը, երբ հարցը վերաբերում էր Հունաստանին՝ ձգտում էր ձեռք բերել Ռուսաստանի բարյացակամությունը, իսկ երբ Բուլղարիային՝ Գերմանիայի համաձայնությունը։ Ըստ Բիյիկլիօղլուի, միայն այդ բանը գիտակցելու վրա էր հիմնված 1914 թ. օգոստոսի 2-ի պայմանագիրը[69]։ Իհարկե, ծանր հետևանքներով հղի այս քայլի հեղինակը Էնվեր փաշան էր՝ եռյակի առաջնորդը և կուսակցության մեջ ու նրա կենտրոնական կոմիտեում մեծ ազդեցություն ունեցող անձնավորությունը։ Նա այն գաղտնի պահեց ոչ միայն կառավարությունից,

---

[64] Biyiklioglu T. Trakya da millî mücadele (Der nationale Kampf in Thrakien) Bd. I, Ankara 1955 (Türk Tarih Kurumu VII, Nr. 25), S. 70 f.

[65] Emin A. Turkey in the World War. New Haven 1930, S. 72.

[66] Markov W. Grundzüge der Balkandiplomatie. Ein Beitrag zur Geschichte der Abhangigkeitsverhältnisse. Bd. I, Leipzig—Fulda 1947, Beilage III, S. 69.

[67] Belege bei Werner E. Die Türkei am Vorabend des ersten Weltkrieges, a. a. O., S. 1574. Zu den Gebietsansprüchen auch Smith, J. G., a. a. O., S. 67.

[68] Şakir Z. 1914 cihan harbine nasil girdik? (Wie traten wir 1914 in den Krieg ein?), Istanbul, 1943, bes. S. 14 ff; Ցավոք, Տ. Զ. Տինայայի ամենակարևոր աշխատությունը՝ „Turkiyede siyası partiler" («Թուրքիայի քաղաքական կուսակցությունները»(գրքին ես ծանոթ չեմ։ Փաստաթղթերի և սեփական վկայությունների միջոցով հեղինակն այստեղ շարադրում է Ittihad ve terakki-ի խմբերի և հոսանքների կարծիքները։

[69] Biyiklioglu T. a. a. O., S. 95 f.

այլ նույնիսկ կենտրոնական կոմիտեից։ Միայն Ջեմալ-փաշան (ծովային մինիստրը) և Թալաաթ բեյը ոչ լրիվ չափով տեղեկացվեցին այդ մասին[70]։ Բայց օգոստոսի 2-ի լույս գիշերը Էնվերը մեծ վեզիրի և արտաքին գործերի մինիստրի, Ջեմալի, Թալաաթի, Ջավիդի և Խալիլի հետ միասին որոշում ընդունեցին չեզոքության և ընդհանուր զորակոչման մասին[71]։

Վ. Վ. Գոտլիբը, որն իր հետևությունները կառուցում է միայն արևմտաեվրոպական և գերմանական տպագիր աղբյուրների վրա, պնդում է, թե Էնվերն ու Թալաաթը լիովին գտնվում էին Վանգենհայմի ազդեցության տակ, որը գրգռում էր նրանց փառասիրությունը և ձգտում օգտագործել նրանց թույլ կողմերը։ Գերմանիայի զինվորական կցորդ ֆոն Շտրեմպելը արդեն 1914 թ. հունիսին ազատ ելումուտ ուներ Թուրքիայի ռազմական մինիստրությունում և իրեն զգում էր ինչպես տանը[72]։ Ալի Իհսան Սաբիսը ռազմական մինիստրին և ապագա գեներալիսիմուսին բնութագրում է որպես մի երազողի և ֆանտաստի, որը թուրքական Նապոլեոնի դեր էր խաղում[73]։ Ջիա Շաքիրը ևս ընդգծում է Էնվերի բախտախնդիր ձգտումը, ինչպես և գերմանական աճող ազդեցությունը նրա վրա, նրա կույր հավատը գերմանական զենքի ուժի հանդեպ[74]։ Ռուսական նախկին թարգմանիչ Ա. Մանդելշտամի համար արդեն Լիման ֆոն Սանդերսի միսիան, որ Էնվերն էր կազմակերպել, նշանակում էր Թուրքիայի վերջնական շրջադարձ Գերմանիայի կողմը[75]։ Ֆրանսիայի դեսպան Բոնպարը 1921 թ. նկատել է, որ «իրականում այս դրամայի միակ դերակատարները Թալաաթն ու Էնվերն են»[76]։

Կասկածից վեր է, որ Էնվերը հակված էր բախտախնդրությամբ, ռազմական գործերում կատարյալ մի դիլետանտ էր, իսկ քաղաքականության մեջ ի վիճակի չէր միմյանցից զատել հնարավորն ու անհնարինը[77]։ Պոտսդամի «փայլատակող զենքը» նրա վրա զորեղ ազդեցություն էր գործել։ Անվիճելի էր նաև Պալավիչինիի աճող ազդեցությունը, որը նրան, ինչպես և Թալաաթին, Ավստրիայի պարտությունից հետո պետք է գրգռեր մտնելու պատերազմի մեջ Եռյակի կողմը՝ ընդդեմ Սերբիայի և Ռուսաստանի. ընդ որում մարկգրաֆը կրկին վերադարձել էր արդեն ապրիլին արտահայտած իր այն կարծիքին, թե ամենալավը Եռյակ միության հովանավորությամբ թուրք-բուլղարական միությունը կլիներ՝ «ներկա խիստ անբարենպաստ իրադրության պայմաններում Բալկաններում փրկելու համար այն, ինչ դեռևս կարելի է փրկել»[78]։

Էնվերն ու նրա համախոհները, սակայն, չէին էլ մտածում դառնալ կենտրոնական պետությունների մարիոնետները։ Ըստ որում Թուրքիայում օգոստոսի 3-ից հետո ուժեղանում էր հակաբրիտանական և պրոգերմանական տրամադրությունը։ Լոնդոնը կարգադրեց մեծ ջանքերով պատվիրված երկու դրեդնոուղները («Սուլթան Օսմանը» և «Ռեշադիյեն»-ն) պահել և բաց չթողնել, թեև դրանց համար արդեն վճարված էր[79]։ Չնայած դրան, Էնվերը շոշափում է Ռուսաստանի տրամադրությունը և գեներալ Լեոնտևին դիմում դաշնակցելու առաջարկով, որը, ի միջի այլոց,

---

[70] Փաստաթղթերով հաստատված ապացույց բերում է Sabis, A. I. Harb hatiralarım (Իմ պատերազմական հիշողություններ) Bd. I., Istanbul 1943, S. 66 f.

[71] Ders. S. 80.

[72] Gottlieb, a. a. O., S. 46 f.

[73] Sabis A. I. a. a. O., Bd. II, Ankara 1951, S. 104; ähnlich Mandelstam A. a. a. O., S. 102.

[74] Şakir Z. a. a. O., S. 303 f.

[75] Mandelstam A. a. a. O., S. 72.

[76] Bonpard. L' Entrée en guerre de la Turquie. Revue de Paris, 15. 7. 1921, S. 287, zitiert bei Mouhktar Pacha, La Turqie, l'Allemagne et l' Europe dépuis le Traitè de Berlin jusqu'a la Guerre Mondiale. Paris. Nancy 1924, S. 284.

[77] Vgl. Ludšuvejt. E. F. a. a. O., S. 25.

[78] OUA. VII, Nr. 9579.

[79] Նախապես պլանավորված էր, որ, դրանք անգլիական դրոշի տակ, հուլիսին պետք է Ժամանեին Դարդանել (ÖUA. VIII, № 9626). օգոստոսի 1-ին Էնվերը ռայխսկառավարությանն առաջարկեց երկու ռազմական նավերն էլ ընդունել Հյուսիսային ծովի մի որևէ նավահանգիստը, Տե՛ս Trumpener U. a. a. O., S. 24. Zum Stimmungsbarometer Mühlmann, C., Deutschland und die Turkei 1913—1914. Die Berufung der deutschen Militarmission nach der Turkei 1913, das deutsch—türkische Bündnis 1914 und der Eintritt der Türkei in den Weltkrieg. Politische Wissenschaft H. 7, Berlin—Grunewald 1929, S. 62 und Şakir, Z. a. a. O., S. 290 f.

նախատեսում էր թուրքական զորքերի ետքաշումը Կովկասի սահմաններից. դրա դիմաց, որպես փոխհատուցում, Թուրքիան պահանջում էր մի շարք էդեյան կղզիներ։ Բացի դրանից, դրա փոխարեն պետք է ստեղծվեր հակաավստրիական բալկանյան բլոկ[80]։ Երկրորդ բանակցությունը Լեոնտեի հետ տեղի ունեցավ օգոստոսի 9-ին, որի թեման կրկին միություն ստեղծելու առաջարկն էր։ Ա. Ֆ. Միլլերն այն կարծիքին է, թե դրա իրականացումը խափանեց Սազոնովի դիմադրությունը, որը վախենում էր այդպիսի պարագայում Բուլղարիային մղել կենտրոնական տերությունների բանակը[81]։ Սակայն դրան վերաբերող փաստաթղթերի հրատարակությունների նոր զննումը ցույց է տալիս, որ Սազոնովը գերմանական միսիայի արտաքսման փոխարեն պատրաստ էր տերիտորիալ զիջումների՝ մոտավորապես համաձայն էր զիջել Լեմնոս կղզին կամ թե գերմանական երկաթուղային կոնցեսիաները հանձնել Թուրքերի ձեռքը։ Այդ բանում նա հանդիպեց տրեմտյան տերությունների կատաղի դիմադրությանը։

Սըր Գրեյը վախենում էր Բալկաններում իրադրության բարդացումից և Թուրքիայում բոլոր կոնցեսիաներից զրկվելու վտանգից։ Այդ պատճառով Թուրքական չեզոքության դիմաց օգոստոսի 18-ին Անտանտի պետությունները դաշն կնքեցին պատերազմի ժամանակ բացարձակապես տերիտորիալ ամբողջականություն պահպանելու շուրջը[82]։

Երիտթուրքական շրջաններում մեծ հիասթափություն տիրեց այս պատասխանի կապակցությամբ։ Այստեղ ծայրահեղ դեպքում հույս ունեին ստանալ գոնե 18—20 տարվա տերիտորիալ երաշխիք, ինչպես նաև վերացնել արևմտյան տերությունների բոլոր արտակարգ տերիտորիալ իրավունքները[83]։ Նույնիսկ այնպիսի մարդիկ, ինչպիսին Մուխտար-փաշան էր, Բեռլինում Թուրքական դեսպանը և Էնվերի կատաղի թշնամին, որոնք նախքան պատերազմի սկիզբը Լոանդուն կերպով հանդես էին գալիս դեպի Ռուսաստանը կողմնորոշվելու օգտին, այժմ ի դեմս ցարական կայսրության և Անգլիայի, տեսնում էին Թուրքիայի վտանգավոր թշնամուն, որը (Թուրքիան) նրանց հետաքրքրում էր միայն այն բանի համար, որպեսզի նախապատրաստեն հենց նրա պետական ինքնուրույնության վախճանը[84]։

Ittihad ve terakki-ի անգլո-ֆրանսիական խմբակցության համար ծանր մի հարված էր նշանակում[85]։ Նաև ծովային մինիստր Ջեմալ փաշայի միսիայի անհաջողությունը, որը հուլիսին, Միջերկրականում ծովային մանյովրներ կատարելու պատրվակով, ճանապարհվեց դեպի Փարիզ՝ Քե դ Օրսեյում՝ շոշափելու համար, թե Ֆրանսիայի հետ մերձեցման ինչպիսի երաշխիքներ կան։ Բայց հենց նրա Փարիզ ժամանելու պահին Պուանկարեն և Վիվիանին պաշտոնական այցով մեկնեցին Պետերբուրգ։ Օգոստոսի 8-ին Ջեմալը հիասթափված վերադարձավ Ստամբուլ[86]։ Հուլիսի 18—23-ը ենիքյոյում, Էնվերի խմբակցության գաղտնի բանակցությունների ժամանակ, նա դեռևս խստորեն հանդես էր գալիս Գերմանիայի հետ միանալու դեմ, քանի որ ինքը ոչ մի հավատ չէր տածում Գերմանիայի հաղթանակի հանդեպ և վախենում էր, թե պարտությունը Թուրքիային չնչելու է աշխարհի քարտեզից[87]։ Օգոստոսի 20-ին նա մի անգամ ևս փորձում է իր բախտը անգլիական դեսպան Մալեթի մոտ։ Չեզոք դիրքի համար, կապված ռազմական միսիայի արտաքսման հետ, նա պահանջում էր.

1) վերացնել բոլոր կապիտուլյացիաները,

2) անհապաղ բաց թողնել երկու դրեդնոուդները (մեծ զրահանավեր),

3) հրաժարվել բոլոր տեսակի միջամտություններից Թուրքիայի ներքին գործերին[88]։

Այս պահանջները կազմում էին Անտանտին բարյացակամ խմբակցության նվազագույն ծրագիրը, խմբակցություն, որը միայն այն ժամանակ կարող էր պրոգերմանական խմբին լռեցնել, երբ ինքը ի վիճակի կլիներ որևէ բան առաջարկել։

Դելկասեն և Գրեյը, ի լիակատար տարբերություն Սազոնովի, 1914 թ. օգոստոսին բառ անգամ չփոխանակեցին Ֆ. Դոան հետ, որովհետև սրանք կարծում էին, թե դա ավելի է համապա-

---

[80] Миллер А. Ф. Вступление Турции в первую мировую войну; Изд. АН СССР, серия ист. и фил., 4, 1946, стр. 327.

[81] Там же.

[82] Smith O. J. a. a. O., S. 71 f.

[83] Ders., S. 74

[84] Moukhtar Pacha, a. a. O., S. 257.

[85] Vgl. zu ihr Şakir Z. a. a. O., S. 281 ff.

[86] Kurat Y. T. a. a. O., S. 295

[87] Ders., S. 299.

[88] Moukhtar Pacha. a. a. O., S. 259.

տասխանում առանց Թուրքիայի բալկանյան անտանտ ստեղծելու իրենց նպատակներին։ Երկու պետական գործիչներն էլ համոզված էին, որ Թուրքիան, բացի չեզոքությունից, այլ բանի ընդունակ չէ։ Բայց դրա համար ոչ ոք չէր կամենում վճարել[89]։ Եթե ուրիշ ոչինչ չլիներ էլ, ապա Գրեյի համար գոնե կարևոր էր այն, որ Բ. Դուռը ձգտում էր վերացնել դժվարությունները, որպեսզի Անգլիան Եգիպտոսի և Հնդկաստանի մահմեդականների նկատմամբ ձեռք բերեր ալիբի[90]։ Առաջ Փարիզում և Լոնդոնում ծանոթ էին Բոսֆորում ռուսական տիրապետության հաստատման ձգտումներին, և մնում էր միայն պաշտպանել Սազոնովին ու չեզոքացնել կենտրոնական պետությունների հետ սեպարատ հաշտության գալու տենդենցները, որ ուներ Վիտտեին շրջապատող ռեակցիոն կլիկը[91]։ Իհարկե, այս կապակցությամբ պետք է առաջանար այն հարցը. Թե Էնվերի ֆրակցիան իր բանակցությունները Լեոնտևի հետ արդյո՞ք առհասարակ լրջորեն էր վարում, Թե՞ դա, ինչպես կարծում է Տրումպեները, սոսկ մի խաբեություն էր, որովհետև ֆոն Վանգենհայմը նախապես լուր ուներ այդ մասին[92]։ Այս Թեզի օգտին է խոսում այն պարագան, որ Էնվերը օգոստոսի 5-ին, այսինքն Ռուսաստանի ռազմական կցորդի հետ ունեցած խոսակցության օրն իսկ, հրաման արձակեց „Teškilātī Mahsusa" հատուկ զորամաս կազմելու մասին, որը հետապնդում էր բացարձակ պանիսլամիստական նպատակ և առանց երկմտանքի Ռուսաստանը դիտում իբրև օկուպացման բազա։ Դա „Umum ālemī Islam teškilātī"-ի՝ ընդհանուր իսլամական հեղափոխական զորքի, հարազատ ջոկատն էր[93]։

Ինչպես արդեն ասվեց, սկզբից ևեթ Էնվերը հենվում էր Գերմանիայի վրա, որովհետև նա համոզված էր, Թե վերջինս հաղթելու է։ Բայց նա այդ չէր անում անվերապահորեն։ Ո՞չ նա, ո՞չ էլ նրա հետևորդները կույր վստահություն չունեին Գերմանիայի հանդեպ, ինչպես պնդում է Պոմյանկովսկին[94]։ Նրանք գիտեին, որ Վիլհելմ II-ը հուլիսի 24-ին լոկ «նպատակահարմարության շարժառիթներով օգտագործեց Թուրքիայի հակումը միանալու նույակ միությանը»[95] և որ իրենց երկիրը գերմանական ռազմական ստրատեգիայում ձեռք էր բերել կրկնակի կարևոր նշանակություն. նախ՝ Դարդանելի փակումով և ապա՝ իբրև ռազմական գործողությունների թատերաբեմ ընդդեմ բրիտանական կայսրության[96]։

Թուրքիայի ռազմական մինիստրի և գերմանական ռազմական միսիայի ղեկավար Լիման ֆոն Սանդերսի միջև տեղի ունեցած բախումներում արդեն (դրանց մասին նա ինքն անձամբ նշել է)[97] դրսևորվեց Էնվերի դիրքի քմահաճ ընթացքը։ Եթե անգամ պրուսական գեներալի փառասեր և ամբարտավան վարքագիծը միայն Էնվերին չէր վշտացնում[98], ապա դա չէր ռազմական մինիստրի անհաշվենկատ քաղաքական կուրսի պատճառը։

Markez-i Umumī-ի բոլոր ֆրակցիաների անսքող նպատակը Թուրքիայի ազատագրումն էր մեծ տերությունների շղթաներից։ Դա մի անգամ ևս պարզ դարձավ Ստամբուլի կուսակցական կոնգրեսում 1916 թ. սեպտեմբերի 28-ին[99]։ Սեպտեմբերի 18-ին Անտանտի տված երերուն հա-

---

[89] Cunningham A. a. a. O., S. 74; Gottlieb W. W. a. a. O., S. 78.

[90] Миллер А. Ф. Вступление . . . стр. 335. Ելնելով այդ հիմնավորումից, Դելկասեն շրջորեն ընդունում է šeih ulislam-ի միջոցով պատերազմի դիմելու կոչը, որովհետև նա վախենում էր գաղութներում իշխող մահմեդականների կրոնական ֆանատիզմից՝ Die europäischen Machte und die Türkei a. a. O. Nr. 1 (A. Izwolskij an S. Sazonov vom 7. 11. 1914).

[91] Dazu Smith C. J. a. a. O., S. 82 f.

[92] Trumpener U. a. a. O., S. 25.

[93] Blyiklioglu T. a. a. O. I. S, 89 f.

[94] Pomiankowski J. a. a. O., S. 31.

[95] Die deutschen Dokumente zum Kriegsausbruch. Vollständige Sammlung der von Karl Kautsky zusammengestellten amtlichen Aktenstuke... Bd. 1, Berlin 1919, Nr. 117, 141.

[96] Fischer F. Griff nach der Weltmacht a. a. O., S. 140 f.

[97] «Իմ և Էնվերի միջև շատ շուտով ի հայտ եկան բախումներ, քանի որ մենք բոլորովին տարբեր տեսակետներից էինք մեկնաբանում իմ զինվորական իրավունքներն ու պարտականությունները». Տես Liman v. Sanders, Fünf Jahre Turkei. Berlin, 2. Aufl. 1922, S. 19.

[98] Fischer F. Weltpolitik, a. a. O., S. 315. Weitere Beispiele in meinem Artikel. Die Türkei, a. a. O., S. 1572 f.

[99] Ըստ Ա. Մանդելշտամի „Die europäischen Machte und die Türkei" զեկուցագրի, a. a. O., Nr. 195.

վաստիացումները պետք է վատթարագույնս վախեցնեին երիտթուրքական կառավարող շրջաններին։ Արևելքում կհաստատվե՞ր ցարական Ռուսաստանի տիրապետությունը, այդ դեպքում կվերանա՞ր Թուրքիայի ինքնուրույնությունը։ Հեգեմոնիայի հնարավորությունն անմիջապես մերձենում էր, եթե Բ. Դուռը հեշտացնում էր Ռուսաստանի համար նեղուցներով անցնելը և բարյացկամություն ցուցաբերում կենտրոնական տերությունների դեմ բալկանյան կոալիցիայի ստեղծման հանդեպ[100]։ Այս տեսակետից կուսակցության բոլոր ֆրակցիաները միահամուռ էին։ Ցնայած դրան, էնվերի ընդդիմախոս Հուսեին-Ռուաֆ-Օրբայը, որը 1918 թ. հոկտեմբերի 14-ին ընդունեց ծովային մինիստրությունը և Մուդրոսում հանդես եկավ որպես զինադադարի հանձնաժողովի ղեկավար, հայտարարեց. «Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մեր մտնելը, իմ կարծիքով, անպայման անհրաժեշտ էր, որովհետև այլապես նեղուցները կընկնեին ռուսների ձեռքը»[101]։ Նույնիսկ Մուստաֆա Քեմալը, որը ոչ մի համակրանք չուներ էնվերի նկատմամբ, 1919 թ. հոկտեմբերի 10-ին ռազմական մինիստր Ջեմալին հղած հեռագրում նկատում էր, թե Թուրքիային բոլորովին ձեռնտու չէր լինի, եթե նա մնար դիտորդի դերում Ռուսաստանի և Անտանտի տերությունների համար Ստամբուլի ունեցած ստրատեգիական դիրքի նկատմամբ[102]։

Ըստ Ալի Նուատ Ջեբեսոյի, էնվերը 1921 թ. Մոսկվայում արդարանում էր հետևյալ ձևով. «Մանանի [հակահարվածից] հետո Ռուսաստանի նկատմամբ [գերմանական] հաղթանակից ես եկա այն համոզմունքին, որ գերմանական ռազմական հզորությունը շարունակվելու է»[103]։ Այդ պատճառով էլ նա պատերազմի մեջ մտնելու ժամկետը համաձայնեցրեց Թալաաթի հետ և ոչ մի ձևով չենթարկվեց ո՛չ Վանգենհայմի, ո՛չ էլ Սանդերսի ճնշմանը կամ ազդեցությանը։ Երբ օգոստոսի 6-ին միջերկրածովային դիվիզիոնը փորձեց անցնել նեղուցներով, Սայիդ Հալիմը գերմանական դեսպանին առաջադրեց 6 պայման. որը Վիլհելմշտրասսեի հետ խորհրդակցելուց հետո ընդունեց դրանք[104]։ Ընդ որում ռազմական միսիայի հետ որևէ համագործակցության մասին ոչինչ հայտնի չէ։ Ընդհակառակը, կատաղած Սանդերսը ուղում էր մենամարտի հրավիրել էնվերին, քանի որ հանձինս նրան տեսնում էր խոստումնազանց մի փալասի։ Օգոստոսի 8-ին նա կայսերից խնդրում է իրեն տեղափոխել արևմտյան ռազմաճակատ[105]։ 1917 թ. հոկտեմբերի 25-ին գերմանական ռազմական լիազոր ֆոն Լոսովը իր զեկուցագրերից մեկում պետք է ողջամտորեն հաստատեր. «Ռազմական միսիայի ներկա սիստեմը լավ է թե վատ՝ այդ մասին տրվյալները բացակայում են։ Այժմյան միսիան հազիվ կես տարվա գործունեություն էր ունեցել, երբ բռնկվեց պատերազմը։ Այս կարճ ժամկետում չէր կարելի Թուրքական բանակի համար մեծ գործունեությամբ շոշափելի օգուտ բերել։ Միսիայի անդամները, իհարկե, հազիվ սկսել էին ընկալել, թե ինչ է անհրաժեշտ Թուրքիային։ Այն ուժը, որ Թուրքիան այդ պատերազմում ամեն օր դրսևորում էր, ներկայիս միսիայի ծառայությունը չէր»[106]։ Ծովային մինիստր Ջեմալ փաշան, որը 1914 թ. հոկտեմբերի 10-ին բոլոր նավերի հրամանատարներին տվեց՝ «ծովակալը (Սուշոն — Է. Վ.) գործում է սուլթանի ամենաբարձր լիազորությամբ, նավատորմը պարտավոր է ենթարկվել նրան»[107] գաղտնի հրամանը, 1914 թ. նոյեմբերի 18-ին հանդես եկավ սպաների առաջ հետևյալ դիմումով. «Մեր նավատորմի գործողությունները Սև ծովում չեն բխում գերմանական ծովակալի ձգտումից՝ օսմանյան կառավարությունը կանգնեցնելու կատարված փաստի առաջ, ինչպես դա կարծում են վեհերոտ մարդիկ, այլ իրականացվում են ուղղակի հրամանի համաձայն։ Գերմանական գեներալներն ու ադմիրալները այլ բան չեն, քան օսմանյան կառավարության կամակատար օրգաններ։ Այն անձինք, որոնք պատասխանատվություն են կրում

---

[100] Moukhtar Pacha. a. a. O., S. 257.

[101] Yakin Tarihimiz (Unsere Jüngste Geschichte), hg. von Kandemir F. Bd. 1, Istanbul 1962, S. 20: *Մեջ է բերվում ըստ Գ. Ծշկեի* „In der Welt des Islam" *գրախոսականի*, IX, 1964, S. 296.

[102] Jaschke C. Deutsch-türkische Militarkonvention vom 18. Oktober 1917. Die Welt des Islam X, 1966, S. 193.

[103] Cebesoy A. F. Millî Mücadele Hatîralarî (*Հիշողություններ ազատագրական պատերազմի մասին*), Istanbul 1953, S. 17; *մեջ է բերվում ըստ Գ. Ծշկեի* „Deutsch-türkische Militärkonvention„-*ի* a. a. O., S. 193.

[104] Trumpener U. a. a. O., S. 28 f.

[105] Ders. S. 33.

[106] Jäschke G. Deutsch-türkische Militarkonvention, a. a. O., S. 197.

[107] Ders., Mitteilungen. 2. Zum Eintritt der Türkei in den ersten Weltkrieg. Die Welt des Islam IV, 1955, S. 51.

օսմանյան ժողովրդի բախտի համար, ոչ ոքի ազդեցությանը ենթակա չեն և անկախ են իրենց մտքերն արտահայտելիս ու որոշումներ կայացնելիս։ Թուրքերը մտել են պատերազմի մեջ, որպեսզի զենքով պաշտպանեն իրենց ազգային անկախությունը (milli istıklâl) *և իրավունքը, կամ էլ պատվով մահանան՝ թուլամորթ ապրելու փոխարեն»*[108]*։*

Էնվերն ու Ջեմալը հավատում էին, թե Ստամբուլից փախչելուց հետո իրենք կկարողանան համագործակցել Մուստեֆա Քեմալի հետ։ Մոսկվայից երկուսն էլ 1920 թ. փորձեցին կապ հաստատել նրա հետ, բայց քեմալականները բոլորովին միտք չունեին պատերազմի վարկաբեկված հանցագործներին ընդունեն իրենց շարքերը[109]*։ Երիտթուրքական պատերազմող կուսակցությունը պետք է փլուզվեր, որովհետև ռեակցիոն լոզունգների ներքո նա հետապնդում էր էքսպանսիոնիստական պլաններ, փորձում էր տնտեսական և սոցիալական ճգնաժամը երկրի ներսում հաղթահարել արտաքին էքսպանսիայի միջոցով և միանալով գերմանական ավազակային իմպերիալիզմի հետ՝ տարված էր մեծապետական քաղաքականության պատրանքով։*

Գերմ. բարգմ. Վ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ТУРЦИЯ МЕЖДУ ТРОЙСТВЕННЫМ СОЮЗОМ И АНТАНТОЙ В 1914 ГОДУ. ИЛЛЮЗИИ И ДЕЙСТВИТЕЛЬНОСТЬ НА БЕРЕГАХ БОСФОРА

ЭРНСТ ВЕРНЕР

(ГДР, Лейпциг)

Резюме

В статье на основе критического осмысления фактического материала с марксистских позиций раскрываются истинные цели империалистических держав в Турции в период Балканских войн и особенно в преддверии первой мировой войны. Автор подвергает критике младотурецкое руководство, стремившееся с помощью западного и в первую очередь германского империализма проводить политику в духе пантюркизма, великотурецкого шовинизма. Характеризуется закономерный провал авантюристических устремлений младотурок.

---

108 Sabis A. I. a. a. O., Bd. II, S. 47.

109 Zur Odyssee der beiden Trumpener U. a. a. O., S. 362—364.